Իսկ նրա կողքին կանգնած յերիտասարդը նրա ավագ վորդին՝ Ամիր-Հասան Բ., վոր ինչպես արձանագրություններից և հիշատակարաններից տեսանք, Եա-



չոլի հաջորդն էր և մասնակիցը յեկեղեցու շինության։ Բայց այս խնդիրը ավելի ևս կպարզվի հետևյալ տողերի մեջ։

Մի ուրիշ բարձրաքանդակ խմբանկար յերկու քարերի վրա, վորսորդական տեսարան է (պատկ. 96—97)։ Ձիու վրա նստած է մի յերիտասարդ, վոր լարել է աղեղը և արձակել նետը փախչող յեղնիկի վզին։ Աղեղնավորի ձին առաջ է գնում, իսկ ինքը յետ է դարձել դեպի յուր վորսը, մինչդեռ յեղնիկը փախչում է հակառակ ուղղությամբ, բայց հարվածն ստանալով դարձել է դեպի վորսորդը։ Վերջինս հագել է նեղ, մինչև սրունքները հասնող բաճկոն, ականազարդ գոտին մեջքին և իշխանական ժապավենը թևին։ Գլխի խույրը բոլորակ է, ներքևի յեզրները զարդարուն կամ ականակուռ, յետևից կախված են արտախուրակներ (գույգ և յերկար խոպոպիքներն են դրանք)։ Գլխարկի վերևի մասը պարզ չէ, բայց ձևից յերևում է, որ նման է Եաչիի պահարանի իշխանական գլխարկին։ Դեմքը ծածկված է թեթև մորուքով։ Նկատվում է ձիու սանձը, թամբի յետևի մասերը, պոչի տակով դեպի մեջքն ու թամբն անցած։ Այս քարերն ընկած են հավանորեն հարավային պատի ճակատից, և այժմ պահվում են ախիդի մեջ, վորի հետ վոչ մի կապ չունին։

Արդ, ո՞վ է այս բարձրաքանդակը ներկայացնող իշխանը. Ջալալյանը, վորպես թե «հուպ ի գլուխ արձանի» կարդացել և «Ամիր Հասան որդի Պռոշյա» փակագիրը։ Բայց սխալ է միանգամայն այս տեղեկությունը. Ձիավորի գլխի աջ կողմից գրված է «Ամիր», ձախ կողմից «Հասան (ընդգծվածը միացած), վորով և կասկածի տեղիք չի մնում, թե յեկեղեցու շինող Ամիր-Հասան Բ.-ի բարձրաքանդակն է այս և վոչ Պռոշի վորդի Ամիր-Հասան Ա.-ի, վոր վախճանված էր արդեն 1292 թվին։ Այսպիսով ձեռքի տակ ունենք ազգագրական-պատմական արժեք ունեցող յերկու բարձրաքան-



Պատկեր 96—97.

դակ, վորոնք գաղափար են տալիս մեզ թաթարական շրջանի իշխանական հագուստի մասին ԺԴ. դարու առաջին քառորդից, վոր համեմատելի յեն Տարսայիճ Որբելյանի և նրա թոռը Բուրթելի պատկերաքանդակների հետ*։

Կրոնական պատկերաքանդակներից ամենից ուշագրավն է դրան կամարակալ քարի Աստվածածինը (պատկ. 98), Հիսուս մանուկ գրկին, ընդհանուր առմամբ մոտ բյուզանդական ամենամեծ սրբություններից մեկի՝ Օդիգիտրիայի տիպին, վոր հիմք է դարձել

* X. B. Том II 216—17. Табл. XXV. և Գեղարվեստ № 4. յեր. 39։ Ունենք և յերկու կարևոր մանրանկարներ, Բանավորի և յուր ամուսին Տղատիկնոջ պատկերները, վորոնց մասին հիշել ենք արդեն (յեր. 18), և վերջերս հրատարակել է հ. Վարդան Հացունի, Վենետիկի Մխիթարյաններից, յուր «Պատմություն հին Տարազին». 1923 թ. Վենետիկ, աշխատության մեջ, և ապա Ումեկա վորդի և Հասան-Ջալալի թոռը Վախտանգ իշխանի պատկերը Էջմ.-ի № 155 ձեռագրի մեջ։ Իշխանական վորմանկարներ ունենք Հաղբատում, Սադունի վորդի Խութլու Բուղայինը, վոր հրատարակել է Մառը (X. B. T. I. Табл. XXI) և Տրդատի ու հայ նախարարների պատկերները ԺԳ—ԺԴ. դարու իշխանական տարազով Անիի Հոնենց ս. Գրիգորում, վոր բարեբաղդաբար արտանկարել ենք ավել իսկական մեծությամբ և գույներով Հնութ. Պահպանութ. Կոմիտեյի վորոշմամբ՝ և այժմ գտնվում է Յերևանի թանգարանում։